



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՐՈՒ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ. Նարեկ, Դավիթ Բեկի 2
Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2018 թվականի N 21

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 07 ապրիլի 2018 թվականի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ
3. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՍԵՎԱԿԻ 17 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
5. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՈՒԻՄ ԱՌԱԿ, ՍԱԿԱՅՆ ՖԻԶԻԿԱՊԵՍ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՐ *Կոչ*

2. ԱՎԴԻՇՈՒԿ ԱՆԴՐԵՅ *Կոչ*

3. ՀԱԿՈՒՅԱՆ ԱՐԱՅԻԿ *Կոչ*

4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈՒՐ

5. ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ *Կոչ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
 ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, Դավիթ Բեկի 2
 Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 22

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի « Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» թիվ 264-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության «ՌԻԵԼԹԻ ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 20.03.2018 թվականի Նարեկ համայնքի հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման արդյունքների հաշվետվությունը.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նարեկ համայնքին պատկանող հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման արդյունքների հաշվետվությունը, որոնց շուկայական արժեքները 20.03.2018 թվականի դրությամբ կազմում են.

1. NISSAN PATHFINDER 4.0 մակնիշի ավտոմեքենայի(պետհամարանիշը 450 LL 70 , 2007թ. արտադրության, ներկայումս գործող վիճակում գտնվող, արժաթագույն) - 2850000 (երկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. ԳԱԶ-53 մակնիշի ավտոմեքենայի (պետհամարանիշը 923 SU 25, 1991թ. արտադրության, ներկայումս գործող վիճակում գտնվող) - 780000 (յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
3. ՀՀ Արարատի մարզի, Նարեկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ախտահանման պահեստի շուկայական արժեքը 20.03.2018 թվականի դրությամբ կազմում է 1 122,000(մեկ միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ ,որի բացվածքը ըստ առանձին շենք ,շինությունների արժեքների բերված է ստորև

Հ/Հ	Շենք,շինության անվանումը	Շինության չափսերը, քառ. մ.(գծ.մ)	Արժեքները ՀՀ դրամ	Հասցեն
-----	--------------------------	----------------------------------	-------------------	--------

1	Հողամաս	2750	943 000	Նարեկ համայնք, Սևակի բեկի փ. N17
2	Շենք	40,2	179 000	Նարեկ համայնք, Սևակի բեկի փ. N17
		Ընդամենը	1 122 000	

4. Նարեկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող մշակույթի տան շուկայական արժեքն է՝ 11 575 000 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, որի բացվածքը ըստ առանձին շենք , շինությունների արժեքների բերված է ստորև

Հ/Հ	Շենք, շինության անվանումը	Շինության չափսերը, քառ. մ. (զծ. մ)	Արժեքները ՀՀ դրամ	Հասցեն	Կադաստրային ծածկագիր
1	Հողամաս	1520	521000	Նարեկ համայնք, Դավիթ բեկի փ. N2	03-063-0005-0054
2	Շենք	571,62	11 054 000	Նարեկ համայնք, Դավիթ բեկի փ. N2	03-063-0005-0054-001-001
		Ընդամենը	11 575 000		

5. Նարեկի համայնքապետարանին պատկանող՝ հաշվեկշռում առկա գույքերի՝ սարք-սարքավորումների , շուկայական արժեքը 20.03.2018 թվականի դրությամբ կազմում է 4 081 000 (չորս միլիոն ութսունմեկ հազար) ՀՀ դրամ:

6. Նարեկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող մանկապարտեզի շուկայական արժեքն է՝ 44 423 000 (քառասունչորս միլիոն չորս հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ, որի բացվածքը ըստ առանձին շենք , շինությունների արժեքների բերված է ստորև

Հ/Հ	Շենք, շինության անվանումը	Շինության չափսերը, քառ. մ. (զծ. մ)	Արժեքները ՀՀ դրամ	Հասցեն	Կադաստրային ծածկագիր
1	Հողամաս	6570	2 254 000	Նարեկ համայնք , Միկոյան փ N14	03-063-014-034
2	Շենք	1020,1	42 169 000	Նարեկ համայնք , Միկոյան փ N14	03-063-014-034-001
		Ընդամենը	44 423 000		

7. Նարեկ համայնքի մանկապարտեզին պատկանող՝ հաշվեկշռում առկա գույքերի՝ սարք-սարքավորումների , շուկայական արժեքը 12.03.2018 թվականի դրությամբ կազմում է 5 518 790 (հինգ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր ինսուն) ՀՀ դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

Կողմ

2. ԱՎԴԻՇՈՒԿ ԱՆԴՐԵՅ

Կողմ

3. ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Կողմ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈՔ

Կողմ

5. ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ.ՀԱԿՈՐՅԱՆ

